

**Առկա և հեռակա ավարտական կուրսերի ուսանողների հետ հանդիպումների  
վերաբերյալ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**24.11.2018թ.**

2018թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժնի վարիչ Մարիետա Ճաղարյանը և բաժնի շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ տարվող աշխատանքների համակարգող Էրինե Ղարայանը հանդիպումներ ունեցան ավարտական կուրսերի ուսանողների հետ:

Յուրաքանչյուր բուհ բացի գիտելիք տալուց ունի նաև մեկ այլ առաքելություն՝ դաստիարակել և ձևավորել ընդհանրական կարողություններով ժամանակակից անհատ և ստեղծագործ անձ, որը կարող է անվարան մուտք գործել աշխատաշուկա և դիմակայել նրա արդի մարտահրավերներին: Սա միզուցե լավ նպատակ է, բայց նրա իրագործման համար պահանջվում է համալսարան-ուսանող, ուսանող-գործատու փոխադարձ արդյունավետ համագործակցություն:

Այս համագործակցության շրջանակներում մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կազմակերպած հանդիպումները մասնաճյուղի առկա և հեռակա ուսուցման ավարտական կուրսերի ուսանողների հետ նպատակ ունենալ աջակցել նրանց ավարտելուց հետո աշխատանքի տեղավորվելու և կարիերան ապահովելու գործում: Հանդիպումներ են տեղի ունեցել առակա ուսուցման 11 կրթական ծրագրերի ավարտական կուրսերի շուրջ 158 և հեռակա ուսուցման 8 կրթական ծրագրերի ավարտական կուրսերի շուրջ 224 ուսանողների հետ:

Հանդիպումները կայացել են մշակված օրակարգով: Մ.Ճաղարյանը և Է.Ղարայանը ուսանողներին ներկայացրել են հանդիպման նպատակը, մատնանշել համագործակցության շրջանակներում մասնաճյուղի կողմից նրանց ներկայացվող առաջարկները, այդ համագործակցությունից ուսանողների ձեռքբերումները և բաժնի ակնկալիքները:

Մասնավորապես նշվել է, որ մասնաճյուղն ակտիվ համագործակցում է մարզի գործատու կազմակերպությունների հետ և նրանց հետ հանդիպումների շրջանակներում ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ թափուր

աշխատատեղերի վերաբերյալ մասնաճյուղին իրազեկելու մասին: Ինչը հնարավորություն կտա նախ ըստ գործատուի պահանջների շրջանավարտների բազայում գտնել համապատասխան մասնագիտությամբ շրջանավարտներ և ուղղորդել, նաև ներգրավել ավարտական կուրսերի ուսանողների:

Հանդիպման կազմակերպիչները ներկայացրեցին իրենց պլանները շրջանավարտների ապագա կարիերան դասավորելու գործընթացում: Նրանք նշեցին, որ մասնաճյուղում գործատուների ներգրավմամբ պարբերաբար կկազմակերպվեն նեղ մասնագիտական դասընթաց-քննարկումներ, ճանաչողական և գործնական պարապմունքներ, կիրականացվեն արտաքին շահակցի պլանով և տեղում անցկացվող նպատակային պրակտիկաներ և այլն: Նման գործընթացները կնպաստեն մասնագիտական կարիերայի նկատմամբ ուսանողների մոտիվացիայի բարձրացմանը, կապահովեն նրանց ակտիվ մասնակցությունը ապագա մասնագիտական կողմնորոշման պլանավորմանը և իրականացմանը, կդառնան աշխատաշուկայի և կոնկրետ գործատուների պահանջներից իրազեկված անհատներ, կունենան հարթակ իրենց խնդիրների վերաբերյալ ազատ արտահայտվելու և դրանց լուծմանը հետամուտ լինելու համար:

Ուսանողներին ներկայացվեցին գործատուների առաջարկները, որոնցում հիմնական շեշտը դրվում է հարցազրույցներին և մրցույթներին շրջանավարտների ճիշտ ներկայանալու և ազատ շփվելու որակների վրա: Նշվեց, որ կկազմակերպվեն համապատասխան սեմինարներ:

Հանդիպումների ժամանակ ուսանողներն ակտիվ մասնակցում էին քննարկումներին, տալիս իրենց հուզող հարցերը, և վստահություն հայտնում, որ անպայման կհամագործակցեն բաժնի հետ՝ իրենց ապագան պլանավորելու համար:

***Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին***